ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- ———— 2025 թվականի № -Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2025 թվականի փետրվարի 27-ի №Ե-634-25 և մարտի 20-ի №Ե-879-25 գրություններով դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) և հայտնել, որ «ՍԱՍՈՒՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Կառուցապատող) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի 33-րդ թաղամասի 12-րդ լոտի կառուցապատող, ինչից ելնելով՝ առաջարկել է նշված տարածքի հարևանությամբ գտնվող, Ընկերությանը պատկանող Հայաստանի Հանրապետության Խանջյան փողոցի №7 հասցեի հարակից տարածքում գտնվող 84 քմ մակերեսով թիվ ՏԵ-276 ենթակայանը՝ առանց ենթակայանի սարքավորումների (այսուհետ՝ Գույք), առուվաճառքի գործարքով օտարել Կառուցապատողին, պայմանով, որ վերջինս գործարքի կնքումից հետո 18 ամսվա ընթացքում փոխարենն Ընկերությանը սեփականության իրավունքով օտարի շահագործման ենթակա նոր ենթակայանի շինություն, ինչը հնարավորություն կտա ապահովել ինչպես ենթակայանից սնվող ներկայիս բաժանորդների, այնպես էլ նոր կառուցվող շենքերի բնակիչների էլեկտրամատակարարումը: Ընկերության համար լրացուցիչ ֆինանսական պարտավորություն չառաջանալու համար կնքվելիք գործարքների գները պետք է սահմանվեն համարժեք՝ 108 000 000 դրամ, իսկ Գույքի շուկայական արժեքի՝ ավելի ցածր լինելու դեպքում Կառուցապատողն Ընկերությանը պետք է վճարի Գույքի և նոր

գույքի շուկայական արժեքների միջև առկա տարբերությունը: Միևնույն ժամանակ, Ընկերությունը նշում է, որ վերջինս գործարքի կնքումից մինչև Գույքի օտարումն ընկած ժամանակահատվածում կապահովի ենթակայանից սնվող սպառողների էլեկտրամատակարարումը Կառուցապատողի կողմից տրամադրված ժամանակավոր ենթակայանի միջոցով՝ համաձայն Ընկերության և Կառուցապատողի միջև 2024 թվականի դեկտեմբերի 13-ին կնքված պարտավորագրի, և Ընկերությունը պարտավոր է մինչև Գույքի շահագործման հանձնումը, ապահովել դրանից սնվող սպառողների տեղափոխումը Կառուցապատողի կողմից տրամադրված ժամանակավոր ենթակայան: Ելնելով վերը նշվածից՝ Ընկերությունը խնդրում է տալ համաձայնություն նշված գործարքի կնքմանը,

բ) հայտի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ բացակայում են «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ գործարքների համաձայնեցման մերժման հիմքերը, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 27-րդ հոդվածը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հանձնաժողովի 2019 թվականի փետրվարի 27-ի №39Ն որոշմամբ հաստատված կարգը, Հանձնաժողովը **որոշում է.**

1. Համաձայնություն տալ Գույքը Կառուցապատողին օտարելու գործարքի կնքմանը, պայմանով, որ՝

1) Ընկերությունը սույն որոշման 1-ին կետում նշված գործարքի կնքումից հետո 18 ամսվա ընթացքում Կառուցապատողից ձեռք կբերի Գույքը,

2) Ընկերությունը, ենթակայանից սնվող բաժանորդներին անխափան էլեկտրասնուցմամբ ապահովելու անհրաժեշտությունից ելնելով, պարտավոր է մինչև Գույքի շահագործման հանձնումը, ապահովել դրանից սնվող սպառողների տեղափոխումը Կառուցապատողի կողմից տրամադրված ժամանակավոր ենթակայան:

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված գործարքը կարող է կնքվել որոշումն ուժի մեջ մտնելու պահից վեցամսյա ժամկետում:

3. Ընկերությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված գործարքը կնքելուց հետո երկշաբաթյա ժամկետում Հանձնաժողով ներկայացնել դրան վերաբերող փաստաթղթերի պատճենները.

2) ընդունել ի գիտություն, որ՝

ա. ենթակայանից էլեկտրաէներգիա ստացող բաժանորդներին անխափան էլեկտրասնուցմամբ ապահովելու պարտավորությունը և դրա պատասխանատվությունը կրում է Ընկերությունը,

բ. Գույքի օտարումից հետո համապատասխան գումարը նվազեցվելու է սակագների վերանայման ժամանակ Ընկերության կողմից սպառողներին վաճառվող էլեկտրաէներգիայի սակագների հաշվարկից, իսկ Գույքի ձեռքբերմանն ուղղված ծախսերը (ոչ ավելի, քան 108 000 000 դրամ) կարող են ներառվել Ընկերության ներդրումային ծրագրում՝ Հանձնաժողովի 2020 թվականի օգոստոսի 19-ի №273Ա որոշմամբ սահմանված կարգով Գույքի ձեռքբերման գործարքի վերաբերյալ համաձայնություն տալու մասին Հանձնաժողովի դիրքորոշումը ստանալու դեպքում,

գ. որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում Ընկերությունն իրավասու է այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ

ք. Երևան
-- ——— 2025թ.